

□□□□□ □□□□□□□□□□□□

Բոլոր իմաստներն աշխարհում ստեղծվում են համեմատությունից, քանի որ ցանկացած իրի՝ մեզ հասանելի հիմքում ընկած է նրա պատկերի գաղափարը, որին էլ հենվում են մտածական համեմատությունների անվերջանալիլթթան (յուրաքանչյուր իր գոյություն ունի կա՞մ որպես օբյեկտ –նշանակելի, կա՞մ նշանակություն), իրերի անվերջանալի կապերը, բանականության ունիվերսալությունը:

Երբ որևէ գրքում առաջին անգամ դիտարկում ես հեղինակի պատկերային համակարգը՝ որպես մտավոր կառույցի ու լեզվի ներքին միասնություն, ապա ծնվում է գաղափարը, թե յուրաքանչյուր ներդաշնակ խոսք ստեղծվում է մեր ներսում կազմավորվող տեքստերի ներդաշնակությունից, ու հավատարիմ ստեղծվող պատկերներին, ծնվում է այնպես, ինչպես Տիեզերքը: Այս դեպքում ստեղծվող տեքստի գեղագիտական հենքը ստեղծագործական մանիֆեստի նշանակություն է ձեռք բերում ու լիարժեքորեն արտահայտում է հեղինակի գեղագիտական կողմնորոշումը՝ նմանվելով վիրտուալ իրականության նախաստեղծ տարրերին, որոնք նույնպես համապատասխանում են աշխարհի ու արվեստի (այստեղ՝ գրականության) արտացոլմանը՝ ներգրավելով ընթերցողին համաաշխարհային նկարչության. Գծանկարի, քանդակի, տեսողական-զգայական էֆեկտների տիրույթ: Այդպիսին է էկվադորցի բանաստեղծ, հրապարակախոս, դիվանագետ Խորխե Կարերա Անդրադեի պոեզիան:

Երբ գեղագիտական գաղափարը տարբերվում է հեղինակային գաղափարից, գրական երևույթի մեջ արտացոլվում է բառապաշարային հիմք, և քերթվածը դիտարկվում է երկու տեսանկյունից՝ իրի (առարկայի) և պատումի (պատումայնության): Պատկերի մետաֆորային պարունակության հանդեպ դառնալով մետալեզվական բնագոյ՝ խոսքի հռետորիկական գոյությունը չի սահմանափակվում միայն միջնշանային համակարգերի փոխանցման գործառույթով, այլ թափանցելով գեղարվեստական տեքստ, սերտաճում է ասացվող պատմությանը՝ դիեգետիզի միջոցով գոյավորելով չտարանջատվող միասնությունը՝ աշխարհ- պատկերը, նկարագրության մեջ տեղավորում է գաղտնաբառեր՝ պատումային պարունակությամբ ու հրապարակախոսական շեշտով, որոնց համար մշտապես ճշտագրիտ է ժամանակը:

Հեղինակն իրականացնում է տեքստ տեքստի մեջ գաղափարը՝ կարևորելով այն նշանագիտության և ու տեղեկատվության տեսանկյունից ու գաղտնաբառերի հիերարխիաների տիրույթում ենթարկելով բարձր լարման՝ որոշակիացնում արվեստի (այստեղ՝ գրականության) գերակայությունը իրականության նկատմամբ: Այս դեպքում ընկալվում է ոչ թե գործողությունների միջոցով ձևավորվող լեզուն, կամ ակտուալ խոսքի տիրույթում ընդլայնվող դատողականությունը, այլ՝ դրության միմեսիսը, որը գոյավորվում է բառի և պատկերի սահմանում՝ գրականության տիրույթում հատելով իր ժամանակավոր բնույթը ու ստեղծելով վայկենական տարածական պատկերի տեսիլքը: Վերջինս Անդրադեն ստեղծում է լեզվական մի համակարգի՝ մյուսին փոխանցելու միջոցով՝ հնարավոր դարձնելով պատկերի անալոգիանական բնույթը և ընդգծելով տեքստում բայի թուլացումը՝ հիմնական պատումայնության հետ համատարած:

Այս յուրահատկությունն ուժեղացնում է նրա նշանակությունը իսկական արվեստի տիրույթում, ու որպես մետաֆորային հատկանիշ չի ենթարկվում ժամանակի

տատանողականությամբ.

Ծնվել են այն դարում, երբ մահացավ վարդը,
երբ շարժիչը արդեն ցրում էր հրեշտակներին:
Կիտոն դիմավորում էր փոստային վերջին դիլիժանները,
ու նրանց հետևից վազում էին դեռևս ծառերի շղթաները,
ցանկապատներն ու տները նոր թաղամասերի,
գյուղերի շենքերը,

ուր դանդաղաշարժ կովերը ծամում էին լռությունը,
ու քամին շտապեցնում էր իր անկշռելի ձիերին:

Տեքստում պատկերը որոշարկիանում է ներքին ձևի շնորհիվ և արտաքին հնչյունական կազմն ինքն է թելադրում դիեզեզիսի զարգացումը՝ հստակորեն կազմավորելով վերգեղարվեստական լեզվի գեներգիսը, որի տիրույթում իրականանում է անցումը անցյալից ներկա, և հնարավոր դառնում ինքնամաքումը ու ժամանակի կանգառի դիտարկումը, որն օգնում է տարածության ներսի պատումին:

Ստեղծվող այս կամ այն տեքստի ազդակից ելնելով՝ սովորաբար նկատի չի առնվում, մշակութաբանական բազմաշերտության խնդիրը, որի առկայության դեպքում ստեղծագործությունն ազատ է միայն լեզուն սպասարկող էմպիրիկ գործողություններից, քանի որ հեղինակը մշտապես օգտագործում է սեփական մտահղացումները՝ պատկերները բնութագրելով ստեղծումի ներքին վիճակի ընթացումով, որ երբեմն թվում են կրկնություն՝ ստեղծագործության ու ենթարկեցումի կերտմամբ.

Ծամում են դառը տերևը կյանքի կոկայի:

Ինչին են սպասու՞մ: Ինչ-որ ժամանակ
մի արտույտ էր ապրում իմ կյանքում,
այսօր ավազե մեծ գերեզման է այնտեղ:

Անդրադեն պատկերում է կոնկրետ առարկան, կոնկրետ երևույթը: Ի տարբերություն գեղարվեստական կտավի, որի միջոցով նկարիչն «անմիականորեն արտացոլում է առարկաների աշխարհը» (Պլատոն), բանաստեղծը բնութագրում է ոչ միայն առարկայական աշխարհը, այլև՝ նրա գեղարվեստական պատկերավորումը, քանի որ սուբյեկտի ու աշխարհի միջև թափանցում են իրը ու նրա պատկերը.

Հավանալի տրամվայը շարժվում է մարակասի ռիթմով:

Հավանալի ծառերը խուզված են, ինչպես ոչխարներ:

Հավանալի մայրուղիները վազում են ուղիղ քաղաքի միջով,
մինչև հանդիպում են հուշարձաններին:

Ու երբ Հավանալի վրա կխայթի
գիշերվա սև ականը, ոչ ոք վեր չի թռչի,
միայն քաղաքի վրա կկախվի լուսնի սև մանգաղիկը,
ինչպես բանանը՝ երկնքի բանանի ծառից:

Անդրադեի ստեղծագործության կարևոր առանձնահատկություններից մեկն էլ կենսագրական տեղեկության ներմուծումն է տեքստ, որի շնորհիվ հեղինակ-մեկնաբան ու հեղինակ-գործող անձ հեռավորությունը վերանում է: Նկարագրության ու պատումայնության միջև դառնալով միջանկյան օղակ՝ իրը ու նրա պատկերն իրականանում են ինչպես տարածական, այնպես էլ ժամանակային տիրույթներում՝ ստեղծելով գեղարվեստական տեքստի հատուկ նշանային համակարգը, որտեղ պատկերը երկչափ տարածությունից փոխակերպվում է քառաչափ տարածության, և նրանում տեսանելի է դառնում ոչ միայն չորրորդ միջուկը՝ ժամանակը, այլև՝ իրը. «...Իմ պոետական աշխարհի առանցքն իրերն

են. նրանք իսկական անհատականություններ են ու ներկայացնում են համընդհանուր գաղտնիքի արտահայտման այն ձևը, որը ձգտում է լուծել մարդը` derechos y su sombra (Իրեր: Ահա կյանքը:), -մի առիթով նշել է Խորխե Կարերա Անդրադեն` բանաստեղծության ներքին էություն հակադրելով ասացման հեղինակային վերաբերմունքը ու այն դարձնելով ավելի արդիական:

Ու թեպետ նշանային համակարգը ժխտում է այդպիսի տարաբաժանման մեքենայությունը և տեսանելի դարձնում նկարչության ու գրականության փոխներթափանցումը, որը հենվում է պատկերանշանի ու խորհրդանշանի տեսակներին, այնուամենայնիվ , գրեթե բոլոր քերթվածներում բայերի ժամանակը ներկա ժամանակն է, որոնց միջոցով Անդրադեն պահպանում է իրադարձությունների ճշգրիտ հերթագայությունը և ընդգծում միֆոլոգիական վերժամանակային կայուն սյուժեի մեխանիզմը, որն էլ հակադրում է պատմական միագիծ-ուղիղ ժամանակին ու ամբողջովին փոխանցում ընթերցողին.

Հավերժի թռչունները թևավոր լուրերով
ծուլվում են գիշերին:

Արևմուտի սպունգը քացախով այրում է
չորացած շուրթերիս:
Կախված եմ ատելի լռության խաչին` խաչված:
Խարույկի ծուխը...
Եվ բոցերի լեզուներից այն կողմ
տեսնում եմ մորս արտասովախառն դեմքը:

Հիշողությունը խաղում է հիշողության հետ;

Հիշողություն է խաղաքարտին:

Իր + պատկեր – պատումայնություն հակադրությունն ակտուալ է Անդրադեի քերթվածների համար, այսպես հակադրվում են արվեստն ու իրականությունը, ունիվերսալն ու մասնավորը, հավերժն ու անցողիկը , իսկականն ու կեղծը, գոյությունն ու պատահականությունը, քանի որ իրը, որպես իրեղեն պատկեր, ենթարկվում է արտահայտության ազդեցությանը այնչափ, որ դառնում է գաղտնիք.

Գրախանութներում չկան գրքեր,
գրքերում` բառեր, բառերում` իմաստ.
Նրանցում միայն կեղևներ են,
թանգարաններում ու սպասասրահներում
գունանկարներ են ու ֆետիշներ:

Ոչինչ չի փրկում մեզ անապատից,
ոչինչ չի փրկում մեզ թմբուկից,
գունազարդ գրքերը` պոկված էջերով,
դառնում են ոչնչության կեղևը:

Անդրադեն վերամարմնավորում է ոչ միայն նկարագրվող իրի պատկերը, այլև նրա ստեղծման գործընթացը, նրա յուրացումը` այդ կերպ բոլոր կողմերից մոդելավորելով արվեստը (այստեղ` գրականությունը), նրա տեսությունը, կազմավորումը, գործնականությունը և արդյունքը` լոգոսի ու տրամաբանության միասնությունը, որն իր

Կենդանությունն է իր իսկ հնարավորություններից: